



Ի Ի Ր Ի Ց Վ Ե Ս Ե Լ ՈՎ ԱԿԻ

Ա .

Ոբովչեան «Բազմավէպ»-ի խմբագիր Հ. Ա. Երեմեանի առաջարկութեան համաձայն ես տալիս եմ «Ռուսահայոց նորագոյն բանաստեղծական դէմքեր» Գեղունի գրական եւ գեղարվեստական հանդիսում ուսափ «Բանասէր»-ում կաշխատիմ հրատարակել գրական գործունէութեան համառօտ քննադատականների հետ միասին, Ռուսահայոց միայն ներկայ ժամանակակից վիճակիրների մասին նոյնպէս մի շարք պատկերազարդ կենսագրականներ՝ վերցրած գրական որոշ շրջանից: Սակայն ներկայ յօդուածու, ինչպէս խոստացել եմ, բացասութիւն կազմելով, առանձին նույիրուած կը լինի միայն իւրից Վեսելովսկու եւ Ս. Շահազիկի անհատական կեանքին եւ նրանց գրական-հասարակական գործունէութեան հանգամանքներին:

Իւրից Վեսելովսկին նշանաւոր է մանաւանդ մեզ Հայերիս համար մատուցած մեծ ծառայութիւններով, որպէս լուրջ թարգման հանդիսացած, որպէս բարեխիղճ ուսումնասիրող հայ կեանքի յատկանիշների եւ նրա սրափ վէրքերի ու թշուառութիւնների հետ ուսւարկութեան ժանօթացնելու համակելի գործում, բանաստեղծների եւ գեղարվեստագէտների ստեղծագործական աաղանդների մասին քննադա-

տարար ոռւսերէն թարգմանութեամբ , իսկ Ս. Շահազիզ , որպէս քնարերգակ բանասատեղծ , իր «Աւոնի վիշտը» մեծ պօչմայով , որի դէմ մըցող եւ հաւասարող նմանը գեռ պակասում է մեր հայկական պօչմիայում :

Վեսելովսին , այժմ 30 տարեկան , ծագումով սուս , բայց հայդէա , գեղեցիկ , համակրելի գէմքով , ազնիւ եւ հեղ բնաւորութեամբ , բարձր զարգացած եւ բարոյական դաստիարակուած ընտանիքի զաւակ , ծնուիլ է Մոսկվայում 1872 թուին : յունիսի 6-ին :

Նրա հայրն է պրօֆեսօր Ալէքսէյ Նիկոլաեւիչ եւ մայրը թարգմանչուհի Ալէքսանդրա Ազոլֆովնա :

1886 թուին մանելով Լազարեան ճեմարանը՝ ընդունակութիւնահրի զարմանալի անդուգութեամբ այդտեղ աւարառում է , պարզեւներ ստանալով , միջնակարգ ուսումը 1890 թուին , ապա անցնելով Մոսկայի բարձրագոյն համալսարանի պատմա-լեզուագիտական-բանասիրական բաժնը՝ 1897 թուին քննութեան է ենթարկվում եւ գերազանց թուանշաններով աւարտում :

Միեւնոյն թուին , ուսման աւարտելու տարեշրջանին , կեանքը կապում է ամուսնանալով Մարիա Վասիլևնա Ֆօմինա օրիորդի հետ :

1889 թուին , գեռ ուսանող ժամանակ , իր հետաքրքրասէր ծնողի առաջնորդութեամբ , զեղեցիկ ճանապարհորդութիւններ է կատարում Եւրոպայում , այցելում է երկու Միխիտրեանների (Վենեսաբիկի եւ Վիէննայի) մենաստանները , բերելով հետք թարմ ու հոռն տպաւորութիւններ եւ յիշողութիւններ

Արտաստանմանում նա եղել է երկու անգամ պատանեկական օրեւում : Եւ երբ ճանապարհորդել է Ռուսաստանում մի քանի պատմական նշանաւոր վայրերում՝ միշտ հետաքրքրութեամբ առիթ է ունեցել մօտիկից ծանօթանալու . հայ աղդի սովորութիւններին , նիստ ու կացին , կենց սղալարական եղանակներին , բնաւորութիւններին . բուն ոգուն եւ այլն :

Դեռ դպրոցական կեմնքում , ընկերների աջակցութեամբ , նա սկսում է շուտով ընտելանալ հայերէն այրուրինի վարժուելուն եւ յիշրաւի կարճ ժամանակամիջոցում կարողանում է բաւականաչափ ձեռք բերել հայերէն գրել եւ կարդալ :

Վեսելովսկին Ռուսաց գրական հորիզոնում անշուշտ մի բացառիկ երեւոյթ է եւ Հայերիս նկատմամբ մի վերին աստիճանի հետարքրական ու հազուազիւտ անձնաւորութիւնն է ներկայանում , որովհետեւ նրա զըրական ամրող գործունէութիւնը , երբ աշքի ենք անցկացնում , նըւիրուած ենք տեսնում գլխաւորապէս հայ գրականութեան հետ ուսւահարակութեան ծանօթացնելու գործին :

Վեսելովսկու նման գրական բարերար միջնորդի գեր կատարելու արժանաւորութեան ահսակէալից՝ մենք ճանաչում ենք եւ երկու ուրիշ

անձնաւորութիւններ — մէկը զիտնական Արթուր Լայստ Գերմանացիների՝ միւսը Միհնաս Զերազ Ֆրանսիացիների համար ։)

Ամբողջ Ռուսիայում կարելի է ասել ամենայն իրաւամբ միակ անձնաւորութիւնն է իւրիշ վեսելովսկին, որ Հայերի մասին շարունակար ընտիր նիւթեր — յօդուածներ է տալիս Ռուսաց պարբերական նշանաւոր թերթերում եւ առանձին երկասիրութիւնների հրատարակութեամբ հայ հեղինակներից արձակ եւ չափածոյ ոտանաւոր ոսերէն այնպիսի թարգմանութիւններ, որոնք անաչառութեան եւ ճշմարտութեան նորանոր լուսաբանող գաղափարների հետաքննին ուսումնասիրութեամբ հանդերձ վաստակներ են բուն գրադիտական։

Բ.

Վեսելովսկու գրական եւ հասարակական գործունէութիւնը սկսում է 1889 թ.-1903 թ. Այդ գործունէութեան գլխաւոր արժանաւորութիւնը կայանում է նրանում, որ նա, մի առանձին անշահասէր եռանդով ու ցանկութեամբ, հետաքրքրուած Հայոց նորագոյն կեանքով եւ զրական երեւոյթներով, ուսւ ինաելիքնա հասարակութիւնը ծանօթացնում է այդ մասին շարունակ, պարբերաբար, առանց դադարևման։ Ասածիս ապացոյց՝ գուք կը տեսնէք նրան զանազան ժամանակներում, գեղեցիկ պարտականութեամբ զինուած — միջնորդի պաշտօն ստանձնած իր վըրայ, յաճախ երեւալիս Ռուսաց նշանաւոր պարբերական հետեւեալ թերթերում եւ հանդէսներում «Ռուսակիա վեղօմօսափի», «Նօվօսափի», «Նօվօէ օրօղրէնիէ», «Պրիազովսկիյ կրայ», «Լ'Արմենիե», «Միք Բօմիյ», «Վեսանիկի եւ րոպի», «Արտիստ», «Սեմեա», «Ա. Պետերբուրգսկիա Վետօմօսատփի», «Ճիւար եւ իսկուսատվօ», «Ժուրնալ Միհնիսաերսավա նարօդնափօ պրոլէտէինիա», «Վեսանիկի Վոսպիտանիիա Ժենսկօն գելօ», «Ժուրնալ դիիա վսէխի», «Սրօրնիկ Պրիզիվ», «Սրօրնիկ Իրատակիա Պօմօչչ Պօստրադավչիմ Վառուցի», «Արմեանամ», «Պուշկինսկի Սրօրնիկ», «Արօրնիկ Պօմօչչ Պօստրատավչիմ օտ նեռլոժանա Սամարսկօի գուբերնիի», «Սրօրնիկ Դէլօ», 2) նաեւ հայ մամուլի մէջ՝ «ՆորԴար» եւ Մոսկուայում հրատարակուող (այժմ գաղաբած) «Հանդէս գրական եւ պատմական»։ Այդ գրուածների մի մասը նուիրուած են հայ ժողովրդական քաղմաշարչար կեանքին, նրա ցաւերին ու կարիքներին։

1) Արժանաւոր են յիշուելու նաեւ Ն. Մառ եւ Կ. Նզեանց, որոնց սակայն զբազմունքն է զլխաւորապէս հին գրչագրական պատմական յիշատակարանների հետագօտութիւններ։

2) «Բանասէր»ի հրատարակուող տպարանում ոսերէն տառեր չը լինեցին պատճառով, հայերէն ենք առաջ բերում եւ բաց ենք թողնում սիրապուած չափածոյ թարգմանական կտորների նմուշները, հայ բանաստեղծներից՝ բնագրերի հետ ուսւերէն համեմատութեամբ միասին, ինկատի առնելով նաեւ «Բանասէր»ի ծաւալը եւ մատենախօսական նեղ շրջանակը։

Նրա գեղարուեստական աշխարհին , գրականութեան , թատրոնին , բանաստեղծութեան , միւսը՝ ռուս եւ ընդհանուր գրական մտաւոր շարժումներին ու կեանքի բազմազան խաւերին : Ամբողջական գործը՝ սիստեմի տակ ենթարկած՝ դրոշմ է կրում վիպական , բանաստեղծական եւ ֆինադատական պատկառելի շարք կազմող ժրացան աշխատութիւնների :

Վիպական գրուածքներից իր յաջողութեամբ ուշադրութիւն կարող է գրաւել «Երազ» , որ առաջին գրական գործի երեխայրին է , տպուած 1889.թ. գեկմեմբերի 27-ին «Խուսակիա Վեհոմօստի» թերթում . մի շատ արտաշարժ վիպակ , համեմած բնութեան պարզ եւ կոկի նկարագրութիւններով եւ գիւրեկան ոճով , ուր ոռւս բանաստեղծի մակն է ողբում հայրենիքն հեռո՛ւ , լոիկ պանդխտութեան մէջ , հարաւային Ֆրանսիայում : Միւսը՝ «Հին յիշողութիւններ» . որի մէջ զգայուն , կենդանի ոճով , բայց տիրերդի տպաւորութեան տակ , սիրային մի փոքրիկ արկած և պատմուած տեղի ունեցած ուսանողական կեանքում եւ հրաժեշտի պատկերն է դժած նոր աւարտող վառվուուն համալսարանականների :

Իրեւ բանաստեղծ , պէտք է ասած , ակաւին պատանեկան դպրոցական-նստարանական կեանքից նա գրել է բազմաթիւ «ճեմարանական» ոտանաւորներ , մեծ մասամբ բովանդակութեան նիւթ վերցրած Հայոց պատմութեան հերոսներից , հայ գործիչներից եւ առհասարակ հայ մտաւոր եւ անտեսական կեանքի իրական ձգտումներից : Դեռ աշակերտական այդ ժամանակամիջոցին իսկ Վեսելովսկին տաղսնդաւոր էր երեւում եւ ո՛րքան առաջ գնաց , այնքան էլ կիրթ ճաշակ եւ ճոխ լեզու ունեցաւ բանաստեղծական արտադրութիւնների մէջ : Եւ ահա՛ այս օր , հետզիւտէ կատարելագործուելով , գրական լայն , շրջահայեաց , լաւ զարգացում ձեռք բերելով , օժառուած՝ բառի բուն նշանակութեամբ՝ բանաստեղծական գեղեցիկ ձիրքմբով եւ առանձնաշնորհումներով , նա տալիս է ինքնուրոյն եւ մանաւանդ թարգմանական բանաստեղծութիւններ առանձին հրատարակութիւնների մէջ : Ինքնուրոյնների թիւը այնքան էլ շատ չէ . նրա մէջ ամենայաջողը կարելի է համարել «Ծխուր Երգիչ» Նադսոնի յիշատակին նուիրուած մեծ ոտանաւորք , Բայց թարգմանականները որոշ տեղ են բռնում եւ գնահատութեան կողմից Հայերիս համար էական նշանակութիւն ունին : «Գլուխ գործոց» այդ բանաստեղծութիւնների մէջ Գամառ-Գամիպայի «Մայր Արաքսի արտասուքը» հոչակաւոր երդի հրաշալի եւ աննման թարգմանութիւնն է , որ շատ մօտ է եւ հարազատ բնագրին . գուցէ եւ գերազանցող՝ համեմատութեան կողմից՝ ոյժի եւ զգացմունքների ամբողջ գեղեցկութեան պահպանելու մրցակցութեան մէջ : Տպուած է 1895 թուին «Վեստնիկ Եւրոպի» ամսագրում : Զանազան պարբերական հրատարակութիւններում ցրուած այդ թարգմանականներից մի մասը (թևով 34) լոյս տեսաւ առանձին գրքով 1898 թուին «Բանաստեղծութիւնների թարգմանութիւն»

ներ» (էջ 80) , որի մէջ , բացի հայ բանաստեղծներից , կան նաև թարգմանական կտորներ իրսէնից եւ Հայնէից : Վերջինից եղած թարգմանականները գժբաղդաբար թոյլ են , բնազրի ոգուն մեղանչող , ոչ մի զգալի տպաւորութիւն չը գործող : Թարգմանական այս առաջին փորձով Վեսելովսկին երկու նպասակի ծառայել կարող է , մի կողմից զիտաւորութիւն ունենալով մայրենի գրականութիւնը հարստացնելու , միւս կողմից իր համարիւն ընթերցող դասին օտար գրական աշխարհների հետ ծանօթացնելու . Նա դրանով մեծ հետաքրքրութիւն է ստեղծում եւ համակրելի սէր է զարթեցնում կարդացողների մէջ , անձնապէս աշխատելով գորհացում տալ ընտրած նպատակին այդ հետաքրքրութեան ու սիրոյ հետ միասին : Եւ նա արդէն այս «առաջին նոր փորձով» առիթ է ունենում մեր չափածոյ գրականութեան հետ ծանօթացնելու այն ոռևս հասարակութեանը , որ մի ժամանակ թեր եւ դէմ , նախապաշար կարծիքներ ունէր եւ իսկ ամօթ էր համարում խօսելու՝ չունենալով ուղիղ հասկացողութիւն թշուառ հայութեան մասին : Արապէս զի կարելի լինի որոշ զաղափար ընծայել այդ հասարակութեանը , ցոյց տալով որ հայը : պատմական այս տառապեալ ազգը նոյնպէս ունի իր կեանքը , իր մամուլը , իր գրականութիւնը , Վեսելովսկին այդ մտքով Յե թարգմանութիւններ է զետեղել այդ գրքում հետեւեալ հայ բանաստեղծների երկերից՝ Ա. Շատուրեան (14 կտոր) , Ս. Շահազիզ (8) , Յ. Յովհաննիսեան (6) , Լեռենց (5) եւ Դուրեան (1) : Թարգմանիչը սակայն չէ կարող «լրիւ զաղափար տալ ժամանակակից հայ բանաստեղծութեան մասին» , ինչպէս ինքն էլ արդարացի խոսանում է նոյն գրքի յառաջաբանում , ուր յայտնում է նոյնպէս ի միջի այլոց : որ ցանկանում է «առաջին քայլն անել» , ցոյց տալով «որ հայ բանաստեղծութիւնն էլ զուտ գեղարուեստական երկեր ունի» : Եւ այժմ բաւականանալով միայն այս բանաստեղծներով «առաջին փորձում» , յոյս է յայտնում որ այս ձեռնարկութիւնը ժամանակով կունենայ երկրորդ յայլն էլ ապագայում :

Ռատանաւորներ հայերէնից ոսերէն թարգմանելու գործը , անշուշա , ունի իր անագին դժուարութիւնները եւ տարբերութեան հիմնապատճառները : Հոգեբանական եւ սրտի զգացմունքների ու զեղմունքների խորութեան , ճաշակների նրբութեան , թափանցելու կարողութեան , թէօրիաների — հայեացֆների ու հակոմների զանազանակերպութեան , տեսողութեան անկիւնների աստիճանների տարբերութեան եւ զաղափարների ու մաքերի մէջ ստեղծագործական բնաւորութեան արտայացման տօն եւ առանձնայատկութիւններ ունենալով միմեանցից հեռու յիշեալ հայ բանաստեղծները , — ինչպան էլ թարգմանիչը ձեռնահասութիւն ունենայ սուր հոտառութեան եւ հմտութեան մէջ , յամենայն դէպս չենք կործու : թէ լիովին իւրացրած լինի այն անհրաժեշտ անպայման առա-

ւելութիւնը . որ զգայ այդ տարբերութիւնը եւ արտայայտել կարողանայ նրանց ոգու եւ ուղղութեան համապատասխան ձեւերով , եթէ աշքի առաջ ունենանք նաև հայկական լեզուի եւ տաղաչափութեան կանոնների բազմակողմանի ծանր պահանջները : Այս հիման վրայ էլ ինչպէս պարզ տեսնում ենք գրքոյկը թերթելիս , Վեսելովսկին չէ կարողացել իր թարգմանութիւնների մէջ հայ բանաստեծների իննուրութիւնը , նրանց յատկանշական թնագծերը պահպանել : Նա տեղ-տեղ , նոյն խեկ մտքի կողմից էլ անյաջող թարգմանական կառուների մէջ կարծես միայն յայտարարի դեր է կատարել : Յաջողութեան կողմից առաւելապէս բազգաւոր կարելի է համարել այդ գրքում միայն Ալ. Մատուրեանի բանաստեղծութիւնները :

1893 թուին Վեսելովսկու խմբագրութեամբ , իր ընկերակից պ. Մինաս Բերբերեանի եւ ուրիշների օժանդակ աշխատակցութեամբ հրատարակուեց մի նշանաւոր ժողովածու «Հայոց Բելլետրիստներ» վերնագրով (էջ 518) . ուր տեղ գտան հատուածոյ թարգմանական կարեւոր կտորներ մեր գրայան մտքի լաւագոյն ներկայացուցիչների զանազան երկերից (Խ. Աբովյան . Պ. Պոջեսան . Ռաֆֆի , Ռ. Պատկանեան , Յ. Պարոնեան , Սերենց , Զ. Աղայեան) թէ՝ այդ մատենագիրների կենսագրական տեղեկութիւններով եւ թէ՝ նրանց մատառ աշխատանքների լուրջ քննադատական արժանաւորութիւններով 1) : Նպատակի կողմից այս միանգամայն համակրելի ձեռնարկութիւնը այժմ սպառուած լինելով՝ հազուազիւ է զարձել , որին զանելու համար ճրացով են ման զալիս

Հայասիրահական անկեղծ եւ վառ ձգտումներով զինաւորուած , սրանով Վեսելովսկին մի անգամ եւս ապացուցեց . որ մինչդեռ ուրիշ հայագէտներ իրենից առաջ եւ յիտոյ զպաղուած են եւ իրենց հետաքրքրութեան նիւթ են որոնում Հայոց հին դարերի պատմական-գրական ուսումնասիրութիւնների մէջ , ինքը գիտէ (եւ յիրաւի առաջինը եւ միակը եղաւ ամրող Ոռուսաստանում) հետաքրքրուել Հայոց ժամանակակից նորագոյն գրականութեան եւ կեանքի յառաջադիմական հոսանքներով ու զարկերով : որքան կարելի է աշխատելով միեւնոյն ժամանակ ցոյց տալ եւ նրանց ուշագրաւ կողմնոր ընդհանրացման եւ ժողովրդականացման վսիմ գործի միջոցով :

1890 թ. լոյս տեսաւ մի նոր երկ . աւելի խոշոր . բազկացած 592 էջերից (գինը 2 ր.) «Գրական նկարագրութիւններ» խորագրով , ուր

1) Հին «Մուրճ»ում յայտնուած էր եւ Ս. Շահազգի անունը , բայց այդ գրքի մէջ նրանից թարգմանած բան չկայ . այլ ընտրուած էր եւ պիտի լինէր «Հայոց Բելլետրիստներ» գրքի արդէն պատրաստ եւ հրատարակելի երկրորդ հատորում , որը սակայն տժբաղդ վախճան ունեցաւ , չը հրատարակուելով Վեսելովսկուց միանգամայն անկախ պատճառներով . . .

Եւրոպական գրականութեան հետ հանգիպում ենք իւ հետեւեալ վեց
հատ նշանաւոր յօդուածների՝ վերաբերութիւն եւ առնչութիւն ունեցող
հայ կհանքի եւ գրականութեան հետ։ 1) «Բայրոնը Ս. Ղազարի կզզում»
2) «Փրիբանեզով եւ Հայերը» 3) «Պուշկինի բանաստեղծութիւնը Առաջա-
ւոր Սոխայում» 4) «Մկրտիչ Պեշիբթաշլեան» 1) 5)« Հայկական դրամայի
հնագոյն շրջանը» 6) «Կողջ վիճակը հայ գրողների երկերի մէջ»։ Առա-
ջին յօդուածում նկարագրում է անգլիացի աշխարհահոչակ բանաստեղծի
այցելական փառաւոր մուտքը Վենետիկի, նրա գեղեցիկ հիւրասիրական
ընդունելու թիւնը եւ սաացած տպաւորութիւնները Միիթարեան մենաս-
տանում, անկեղծ յափշտակուած մեծարանքներով դրուատում է Միի-
թար Սեբաստացու արժանաւոր յենորդների սփոած լուսաւորութեան
ճառագայթների մասին, ներկայացնելով Վանքը Խալական ազատ հո-
ղի վրայ, Ալդրիականի բանաստեղծական ջրերի մօս, մենաւոր խա-
ղաղութեան կղզալայրում որպէս յենարան ու փարոս՝ ի պարձանս Հա-
յութեան՝ քաղաքակրթութեան առջեւ . . . Երկրորդում Խուսաց գրող Գրի-
բաեղովի կեանքն է նկարագրում եւ նրա համեստ կարծիքները Հայոց
մասին, Երրորդում Պուշկինի ոուս առաջնակարգ բանաստեղծի մասին է
խօսում եւ նրա ու մի քանի ոուս բանաստեղծների ունեցած ազդեցու-
թեան այն ժամանակուայ հայկական անշարժ ու թմրած մտաւոր ույժե-
րի, գլխաւորապէս Ս. Շահազիզի բանաստեղծութեան վրայ, Չորրորդում
Մ. Պեշիբթաշլեանին իտէալիստ-բանաստեղծ է կոչում, ակնարկ ձգելով
նրա քննարի եւ հասարակական գործունէութեան վրայ, Ալյու տեղ ցոյց
է տալիս նա ուսուցիչ Հ. Ղ. Ալիխանի ազդեցութիւնը Պեշիբթաշլեան
աշակերտի բանաստեղծութիւններում, մէջէ մէջ հրապարակ բերելով
համեմատական կտորներ չափածոյ թարգմանութեամբ, Այնուհետեւ կանգ
առնելով իրբեւ հասարակական գործչի՝ ընորոշում է նրա՝ դէպի բարու-
թիւն եւ հաշտութիւն առաջնորդող՝ խաղացած զերը Հասունեան եւ
Հականասունեանց տաք վիճաբանութիւնների ու կոխունների միջոցին,
թւում է նրա բարեմասնութիւնները՝ համակրութիւն զէպի իր հի-
ւանդ գրութեան կ. Պօլսի լաւագոյն շրջանում եւ ջերմ մասնակցու-
թիւնը այն տեղի թատրոնական գործերում, Նոյնպէս մի քանի խօսք է
նուրիրում միւս տաճկահայ զգայուն բանաստեղծ Պետրոս Դուրեանի մա-
սին 2) : Հինգերորդում Հայոց բեմի պատմութիւնից, Թիֆիխսի թատրո-
նական կեանքից եւ հին շրջանի գրամաների յատկութիւններից ճոխ
անդեկութիւններ է տալիս, Վեցերորդում հայ կողջ վիճակն է պատկերա-
ցնում հայ գրողների աշխատութիւններում եւ նրանց հայեացքներն է
յննագատօրէն վերլուծման ենթարկում կանանց դասի պաշտպանու-
թեան համակերելի գործում։

(Տարունակելի)

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԵԱՆ

1) Նախ յոյս է տեսել 1899 թ. «Ա. Պետրովուգսկի Վեպօմուսափ» լը-
րագրի մէջ «Միրոյ եւ եղբայրութեան քարոզիչ» վերնագրի տակ։

2) «Առաջայ»-ում (1902 թ. N. 3, էջ 201) կայ մի առանձին ար-
ձակ յօդուած Վեսելովսկու նոյն բանաստեղծի մասին թարգմանութեամբ
Գր. Բեդելեան։